ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,
ՀՊՏՀ ԳՄ

ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՓՈՒԼԱՅԻՆ ԵՎ ՓԱԹԵԹԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ 1970-ԱԿԱՆ ԹԹ.

Հիմնաբառեր. *Պաղեստին, ԱՄՆ, ԽՍՀՄ, փուլային, փաթեթային, Երուսաղեմ, Արևմտյան ափ*

1960-ականների վերջերին և 1970-ականներին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի արտակարգ նստաշրջանում քննարկվել էին հակամարտության կարգավորման 5 բանաձևերի նախագծեր, որոնք ենթադրում էին խնդրի լուծման փուլային և փաթեթային տարբերակներ: Փաթեթային տարբերակին կողմ էր խորհրդային դիվանագիտությունը, իսկ ԱՄՆ-ը հակված էր լուծման փուլային տարբերակին, որի արդյունքում կայարվեց արաբահրայելական հակամարտության կարգավորման առաջին քայլը՝ Եգիպտոսն ու Իսրայելը կնքեցին Քեմփ-Դևիդի համաձայնագիրը:

1967 թ. հունիսի 5-ին սկսված արաբահրայելական պատերազմի արդյունքում Իսրայելը գրավեց ավելի քան 60.000 քառ. կմ տարածք՝ 1.5 մլն բնակչությամբ: Եգիպտոսից գրավվեց Սինայի թերակղզին և Ղազայի հատվածը, Հորդանանից՝ նույնանուն գետի արևմտյան ափը՝ Արևելյան Երուսաղեմ, Բեթղեհեմ և Նաբլուս քաղաքներով: Բացի երեք ապառազմականացված գոտիներից, Սիրիայից գրավվեցին Գոլանյան բարձունքները: «Եգիպտոսի, Սիրիայի և Հորդանանի դեմ Իսրայելի 1967 թ. հունիսյան ագրեսիայի հետևանքով մերձավորարևելյան կոնֆլիկտը վերաճեց միջազգային ճգնաժամի»[1]:

Պատերազմական գործողություններին զուգահեռ և դրանցից հետո ՄԱԿ-ում քննարկվում էին նախ՝ ռազմական գործողությունների դադարեցման, ապա հարցի լուծման նախագծեր: ՄԱԿ-ի ԳԱ արտակարգ նստաշրջանում քննարկվում էին 5 բանաձևերի նախագծեր: Այս պահից սկսած՝ կարելի է խոսել պաղեստինյան խնդրի *լուծման փուլային և փաթեթային տարբերակների* մասին:

Առաջին երեք նախագծերը, այդ թվում՝ նաև խորհրդային և ալբանական, պահանջում էին իսրայելական զորքերի անվերապահ դուրսբերում գրավված տարածքներից: ԱՄՆ-ի և 18 լատինամերիկյան երկրների նախագծերը այդ հարցը շաղկապում էին բոլոր հարցերի քննարկման հետ[2], որը, փաստորեն, նշանակում էր իրավիճակը թողնել նույնը: Ըստ էության, հետագայում փուլային տարբերակի կողմ ԱՄՆ-ն առաջարկում էր հարցի փաթեթային լուծում կամ ստատուս քվոյի պահպանում: Չնայած ոչ մի տարբերակ չհավաքեց ձայների 2/3-ը՝ հուլիսի 14-ի նիստի ժամանակ ՄԱԿ-ը 99 ձայնով դատապարտեց Իսրայելի կողմից Երուսաղեմի կարգավիճակը փոխելու հանգամանքը: ԱՄՆ-ի դիրքորոշման

---

[1] Հ. Գրիգորյան, Սիրիայի ձախբասական ղեկավարության դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 15, Եր., 1989, էջ 30:

[2] Никитина Г., с. 380.

պատճառով գլխավոր հարցի՝ իսրայելական զորքերի դուրսբերման շուրջ որոշում չընդունվեց: Իսրայելական զորքերի դուրս գալը պետք է կապվեր Իսրայելի գոյության համար անվտանգության երաշխիքներ տալու հետ[1], ԱՄՆ-ը դիտավորյալ ձգձգում էր ԱԽ-ի կողմից կրակի դադարեցման բանաձևի ընդունումը՝ հնարավորություն տալով Իսրայելին գրավելու ավելի շատ տարածքներ[2]:

1967 թ. նոյեմբերին ՄԱԿ-ի ԱԽ-ը քննարկեց 4 բանաձևերի նախագծեր, որոնք նախաձեռնել էին ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Անգլիան, Հնդկաստանը, Մալին և Նիգերիան[3]: Ի վերջո, 1967 թ. նոյեմբերի 22-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց 242-րդ բանաձևը, որը հիմնված էր անգլիական տարբերակի վրա[4]: Այն նախատեսում էր՝

1. Իսրայելական զորքերի դուրսբերում 1967 թ. հունիսյան պատերազմի ժամանակ գրավված տարածքներից:
2. Թշնամական տրամադրվածության վերացում և տարածաշրջանի ցանկացած պետության տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության՝ գոյություն ունենալու իրավունքի ճանաչում:
3. Ազատ ծովային երթևեկության ապահովում:
4. Ապառազմականացված գոտիների ստեղծման ճանապարհով երաշխավորել տարածաշրջանի բոլոր պետությունների տարածքային անձեռնմխելիությունը:

«242-րդ բանաձևը կրում էր փոխզիջումային բնույթ, ինչի հետևանքով նրա մեջ, դրական երևույթների հետ մեկտեղ, առկա էր նաև մի էական թերություն, կապված գլխավորապես այն բանի հետ, որ մերձավորարևելյան ճգնաժամի հիմնական բովանդակություն կազմող պաղեստինյան հարցը, հանգեցվելով միայն պաղեստինցի փախստականների խնդրին, բանաձևում պատշաճ լուծում չէր ստացել: Երկրաշրջանի բոլոր պետություններին կոչ անելով ճանաչել 1948-49 թթ. պատերազմի հետևանքով ձևավորված սահմանները՝ բանաձևը առաջ չէր քաշում անկախ պաղեստինյան արաբական պետության ստեղծման հարցը: Այսպիսով՝ 242-րդ բանաձևը որոշակիորեն հակասում էր 1947 թ. նոյեմբերի 29-ի բանաձևին, որը նախատեսում էր արաբական պետության ստեղծում Պաղեստինում»[5]:

Հարկ ենք համարում նշել, որ 242-րդ բանաձևի անգլիական տեքստում the կամ all հոդի բացակայությունը տեղի տվեց վիճաբանությունների: Բանաձևի անգլերեն տեքստում ասվում էր. «…Withdrawal of Israeli armed forces from territories occupied in recent conflict…»[6]: Վերոհիշյալ հոդերի բացակայությունը Իսրայելին թույլ էր տալիս խուսանավել՝ պնդելով, որ չեն նշված կոնկրետ տարածքներ: Իսրայելական կողմը գտնում էր, որ բանաձևը պահանջում է որոշ հետքաշում, ոչ թե ամբողջությամբ:

---

[1] Նույն տեղում, էջ 380.

[2] Сионизм в системе империализма, АН СССР, М., 1988, с. 111.

[3] Никитина Г., с. 380.

[4] UN Resolutions, Historical Documents, Http://www. ariga.com./.

[5] Հ. Գրիգորյան, Սիրիայի ձախբաասական ղեկավարության դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h© 15, Եր., 1989, էջ 47:

[6] Building for Peace in Middle East: an Israeli-Palestinian Dialogue, p. 147-148.

1969 թ. մերձավորարևելյան հակամարտության քաղաքական կարգավորման համար ԱՄՆ-ը համաձայնեց Նյու Յորքում սկսել ԱԽ նիստեր, բայց պետքարտուղարությանը տրվել էին գաղտնի հրահանգներ. «Վարչակազմը չի ուզում արագ հաջողությունների հասնել քառակողմ նիստերի ժամանակ»[1]: Արտաքինից ԱՄՆ-ը ցուցաբերում էր արտակարգ ակտիվություն՝ զանազան փաստաթղթերի նախագծեր կազմելու հետ կապված: Սակայն, 1969 թ. դեկտեմբերին ԱՄՆ-ի պետքարտուղար Ռոջերսը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր «Վաշինգտոնը ճիշտ չի համարում, որ հակամարտության կարգավորումը արտացոլի կամ ազդի բոլոր նվաճումների վրա: Մեր քաղաքականությունը ուղղված է նրան, որ արաբներին սիրաշահելու միջոցով նրանց պարտադրվի մշտական խաղաղություն...»[2]: Միաժամանակ, նախատեսվում էր ապահովել Իսրայելի ռազմական առավելությունը արաբական երկրների նկատմամբ: ԱՄՆ-ը լրջորեն վախենում էր, որ համապարփակ կարգավորումը, որի կողմնակիցն էր Նասերը, կարող է վնասել Իսրայելին: Այդ նպատակով 1971 թ. սեպտեմբերին ԱՄՆ-ը հրաժարվեց մասնակցել ԱԽ-ի մշտական անդամների նիստերին: «1973 թ. հուլիսին ԱԽ-ում ԱՄՆ-ի վետոն հօգուտ այն բանի էր, որ ԱՄՆ-ը վճռականապես դեմ է համապարփակ քաղաքական կարգավորմանը»[3]:

1973 թ. սկսվեց ռազմական մեծ քանակի տեխնիկայի տեղափոխումը ԱՄՆ-ից Իսրայել: Այն նպատակ ուներ օգնել Իսրայելին պահպանելու գրավված տարածքները: Նոր պատերազմի անխուսափելիության մեջ ոչ ոք չէր կասկածում:

1973 թ. հոկտեմբերի 6-ին, ժամը 15:00 Եգիպտոսը սկսեց պատերազմը: Այս անգամ Իսրայելի 1967 թ. հաջողությունները չկրկնվեցին: Մոսկվա ժամանեց ԱՄՆ-ի պետքարտուղար Քիսինջերը: Այստեղ մշակվեց համատեղ բանաձև կրակի դադարեցման մասին, որը 1973 թ. հոկտեմբերի 22-ին ընդունվեց ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից: Ըստ 338-րդ բանաձևի[4]՝ նախատեսվում էր.

1. կրակի անհապաղ դադարեցում,
2. ՄԱԿ-ի ԱԽ-ի 1967թ. №242-րդ բանաձևի անհապաղ կատարում,
3. բանակցությունների սկսում շահագրգիռ կողմերի միջև:

Սկսվեց բանակցությունների և կարգավորման մի բարդ շղթա, որը ձգվեց Ժնևի կոնֆերանսից մինչև Քեմփ-Դևիդի համաձայնագիր:

1973 թ. հոկտեմբերյան պատերազմի ավարտից հետո հստակորեն երևում էին այն գործոնները, որոնք վկայում էին արաբահիսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման մասին: 1973 թ. պատերազմի ժամանակ երևաց արաբական երկրների աճած ուժն ու հզորությունը: Ծանրակշիռ գործոն էր 1973 թ. հոկտեմբերին արաբական երկրների հայտարարած նավթային էմբարգոն: ԱՄՆ-ը ստիպված էր հաշվի նստել ստեղծված իրադրության հետ: Արաբական երկրները սպառնում էին նման գործողություններ կիրա-

[1] Овинников Р., Зигзаги внешней политики США, с. 93.
[2] Кременюк В., Политика США в развивающихся странах, с. 113.
[3] Овинников Р., Зигзаги внешней политики США, с. 94.
[4] UN Resolutions, Historical Documents, Http://www.ariga. com/.

ռել արևմտյան այն երկրների դեմ, որոնք այս կամ այն կերպ օժանդակում էին Իսրայելին: Բացի դրանից, պարտությունը Վիետնամում ստիպում էր ԱՄՆ-ին ավելի ու ավելի սահել միջազգային լարվածության թուլացման դիրքեր:

1974 թ. հունվարի 11-18-ը Կահիրե-Սուեզ խճուղու 101-րդ կմ-ի վրա ստորագրվեց զորքերի տարաբաժանման վերաբերյալ իսրայելաեգիպտական համաձայնագիրը: Ժնևի կոնֆերանսում ստորագրվեց նմանատիպ համաձայնագիր սիրիական և իսրայելական զորքերի տարաբաժանման վրաբերյալ: Սիրիային վերադարձվեց Գոլանյան բարձունքների մի մասը՝ Կունեյտրան: 1975 թ. սեպտեմբերի 1-ին Ժնևում սկսվեց նոր կոնֆերանս, իսկ սեպտեմբերի 4-ին Եգիպտոսը և Իսրայելը ստորագրեցին Սինայի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իսրայելական զորքերի հետքաշում, Միլթա և Գիդի լեռնանցքների անցում Եգիպտոսին: Եգիպտոսն իրեն վերադարձրեց Սինայի 10%-ը: Իսրայելի ռազմական նավերը ստանում էին Սուեզի ջրանցքով ազատ երթևեկության իրավունք: Երկրորդ փաստաթղթով ԱՄՆ-ը պարտավորվում էր հասնել Եգիպտոսի կողմից համաձայնագրի անխախտ կատարմանը և արգելել նրա մասնակցությունը Իսրայելի դեմ ուղղված գործընթացներին:

Սինայի համաձայնագրի ստորագրումից հետո ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության մեջ նկատվում են որոշակի փոփոխություններ: Քարտերի վարչակազմը հակվում էր այն գաղափարին, որ սեպարատ պայմանագրերը ապրել են իրենց ժամանակը, պետք է վերադառնալ համապարփակ կարգավորման: Սակայն, Եգիպտոսի նախագահ Սադաթի՝ Քարտերին ուղղված նամակում ասվում էր, որ ոչինչ չպետք է խանգարի Եգիպտոսի և Իսրայելի միջև ուղղակի բանակցություններին: Դա ԱՄՆ-ին ստիպեց նահանջել համապարփակ կարգավորումից դեպի անջատողական մոտեցում, իսկ 70-ական թթ. վերջերին ԱՄՆ-ը հեռացավ արտաքին քաղաքականության մեջ միջազգային լարվածության թուլացման կուրսից՝ կապված Աֆղանական և Իրանական հեղափոխությունների հետ:

1978 թ. հունվարին ԱՄՆ-ը վերջնականապես կանգնեց եգիպտաիսրայելական սեպարատ հաշտություն կնքելու դիրքերի վրա՝ պաշտոնապես հրաժարվելով համապարփակ կարգավորումից: 1978 թ. մարտին Վաշինգտոնում տեղի ունեցած Բեգին-Քարտեր հանդիպման ժամանակ, ԱՄՆ-ի նախագահը հայտարարեց, որ Իսրայելի պահանջները հանգում են «6 «ոչ»-երի»:

1. Իսրայելը չի ցանկանում հեռանալ արևմտյան ափից:
2. Նա չի դադարեցնի հրեական նոր բնակավայրերի կառուցումը գրավված տարածքներում:
3. Նա չի ցանկանում հեռանալ Սինայից կամ
4. Այն թողնել ՄԱԿ-ի ու Եգիպտոսի հովանու տակ:
5. Իսրայելը չի ընդունում, որ 242-րդ բանաձևը վերաբերում է արևմտյան ափին ու Ղազային:
6. Պաղեստինիցի արաբներին հնարավորություն չի տրվի որոշելու իրենց ապագան:

1978 թ. սեպտեմբերի 5-ին ԱՄՆ-ում՝ Քեմփ-Դևիդում Իսրայելի և Եգիպտոսի միջև սկսվեցին բանակցություններ, որոնք տևեցին 13 օր, իսկ 1979 թ. մարտի 26-ին ստորագրվեց խաղաղության պայմանագիր: Պայմանագիրը ուժի մեջ մտավ 1979 թ-ի դեկտեմբերի 25-ին: Ըստ պայմանագրի՝

1. Իսրայելի և Եգիպտոսի միջև հաստատվում է խաղաղություն:
2. Իսրայելի և Եգիպտոսի միջև հաստատվում են դիվանագիտական հարաբերություններ, Իսրայելական զորքերը դուրս են բերվում Սինայից:
3. Ճանաչվում է Եգիպտոսի ինքնիշխանությունն (սուվերենությունն) այն սահմաններում, որը եղել է Եգիպտոսի և Պաղեստինի մանդատային տարածքի սահման:
4. Իսրայելական նավերը ազատ երթևեկելու են Սուեզի ջրանցքի շրջանում: Աքաբայի ծովածոցը համարվում է ազատ նավագնացության գոտի:
5. Եգիպտական կառավարությունը իրավունք ունի մեկ դիվիզիա ունենալ Սուեզից 50 կմ արևելք, իսկ Աքաբայի ծոցից արևմուտք գտնվող 20–40 կմ տարածք գտնվելու է ՄԱԿ-ի ուժերի հսկողության տակ:
6. Իսրայելական զորքերը չեն հեռանա արևմտյան ափից և Ղազայից, այլ կտեղաբաշխվեն անվտանգության գոտիներում, և տարածքներում պետք է ապահովվի ոչ թե տարածքային, այլ բնակչության ինքնավարություն:

Ինչ խոսք, պայմանագիրը ամերիկյան դիվանագիտության խոշոր հաղթանակն էր, բայց ոչ հարցի վերջնական լուծումը: ԱՄՆ-ը հանդես էր գալիս որպես արաբաիսրայելական հակամարտության կարգավորման փուլային ձևի կողմնակից և միջնորդ: Այդ քաղաքականության էությունն այն էր, որ ողջ հակամարոտությունը դիտվում էր ոչ թե միասնական և անբաժանելի խնդիր, այլ որպես բազում խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրը առանձին-առանձին լուծելի է: Այս քաղաքականության լավագույն արդյունքը եղավ Քեմփ-Դևիդի համաձայնագիրը: Չնայած դրան՝ հարկ ենք համարում նշել, որ դրանից հետո ավելի քան 10 տարի Մերձավոր Արևելքում խաղաղության գործընթացը տեղատվություն ապրեց և ակտիվացավ 1990 թ. հետո՝ կապված աշխարհում տեղի ունեցող նոր զարգացումների և փոփոխությունների հետ:

АРТАК ОГАННИСЯН

ЭТАПНЫЕ И ПАКЕТНЫЕ ВАРИАНТЫ РЕШЕНИЯ ПАЛЕСТИНСКОГО КОНФЛИКТА В 1970-ГГ.

Ключевые слова: *Палестина, США, СССР, поэтапно, пакетный, Иерусалим, Западный берег*

В конце 1960-х и 1970-х гг. ГА ООН обсудил 5 резолюций о разрешении конфлика, в том числе поэтапные и пакетные варианты урегулирования конфликта. Советская дипломатия предпочитала пакетный вариант, а Соединенные Штаты были склонны к поэтапному решению, в результате чего был сделан первый шаг в урегулировании арабо-израильского конфликта - Египет и Израиль подписали Соглашение в Кэмп-Дэвиде.

ARTAK HOVHANNISYAN

THE STAGE AND PACKAGING OPTIONS OF SOLUTION OF THE PALESTINIAN CONFLICT IN 1970'S

Key words: *Palestine, US, USSR, stepwise, package, Jerusalem, West Coast*

In the late 1960's and 1970's The GA of UNO discussed five resolutions on the resolution of the conflict, including phased and package versions of the conflict settlement. Soviet diplomacy preferred a batch option, and the United States was prone to a phased decision, as a result of which the first step was taken in the settlement of the Arab-Israeli conflict - Egypt and Israel signed the agreement at Camp David.

ԹԱՄԱՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՉԻՆԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. *Չինաստան, ներդրումներ, բրենդ, զավթողագործություն, անշարժ գույք, վերազգայնացում, համաշխարհային տնտեսություն, մրցունակություն*

Հոդվածում քննարկվում են չինական կորպորացիաների ներդրումային ռազմավարության առանձնահատկությունները, հիմնական ուղղությունները, այն մոդելները, որոնցով չինական ընկերությունները արտասահմանում իրականացնում են ներդրումներ: Տրված է նաև գործարարության վերազգայնացման չինական ռազմավարության գնահատականը:

Չինական ընկերությունները, որոնք իրականացնում են արտասահմանի զավթողագործության (էքսպանսիայի) պետական ռազմավարությունը, գործում են 4 հիմնական ուղղություններով:

Չինական ընկերությունների ***առաջին խումբը*** կողմնորոշված է դեպի արտասահմանում սեփական արտադրանքի իրացման ընդլայնումը: Արտաքին առևտուրը չինական արտադրողների կողմից, որոնք արտասահմանում ստեղծում են առևտրային ֆիրմաներ, արտաքին շուկաների յուրացման հիմնական մեթոդն է: Իր հերթին, արտադրական ձեռնարկությունների կազմակերպումը, սարքավորումների լրակազմի դուրսկրումը և պատրաստի արտադրանքի հավաքումը տեղում հանգեցնում են չինական տեխնոլոգիաների, սարքավորումների և աշխատանքային ռեսուրսների արտահանմանը: Որպես կանոն,